ՀՍԽՀ Լուսավորության Ժողովրդական Կոմիսարիատ

17229

ԾՐԱԳԻՐ
ՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ V—VI ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

74
Ծ-98

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1936

ՀՍԽՀ-ССР
Им. А. Мясникян
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆ.

15 MAY 2015

Պատ. խմբագիր՝ Մ. ՑՈՒՐԻՆՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Գ. ՋԵՆՅԱՆ
Սրբագրիչներ՝ Հ. Դալուխանյան, Հ. Մանուկյան

Հրատարակ. 3795 գլավ. լիտգոր Վ. 1148, պատվ. 914, տիրաժ 2500
Հանձնված է արտադրության հուլիսի 16-ին 1936 թ.
Ստորագրված է տպագրության օգոստոսի 13-ին 1936 թ.

Պետհրատի տպարան, Երևան, II Գնունի, 4.

25 SEP 2010
74
Ծ-98
1010
40178

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

Նկարչության դասավանդումը միջնակարգ դպրոցում նպատակ ունի սովորեցնել բնականից ու հիշողությամբ (պատկերացումով) գրագետ կերպով զանազան առարկաներ նկարել: Դրա համար անհրաժեշտ է սիստեմատիկորեն զարգացնել աշակերտների տեսողական հիշողությունը, տեսնելու և դիտելու հմտությունները՝ որպես անհրաժեշտ նախադրյալներ ոչ միայն գեղարվեստի, այլև գիտության ու տեխնիկայի ամեն մի բնագավառում աշխատելու համար:

Դրա հետ միասին միջնակարգ դպրոցում նկարչությունը պետք է հնարավորություն ընձեռի աշակերտներին իրենց ստացած ունակություններն ու հմտությունները կիրառելու նաև նկարչական ստեղծագործական աշխատանքների, թեմատիկ նկարների և դեկորատիվ ձևավորման առաջադրությունների բնագավառում:

Հիշյալ նպատակով կերպարվեստի դասավանդումը միջնակարգ դպրոցում պարունակում է հետևյալ յերեք բաժինները.

1. Կերպարվեստի գրագիտության հիմունքները.

ա) Ձևի ուսումնասիրություն (առանձին առարկաների և մի խումբ առարկաների նկարումներ), բ) գույնի ուսումնասիրություն:

2. Կոմպոզիցիոն նկարչություն:

 ա) Թեմատիկ նկարչություն:

 բ) Դեկորատիվ ձևավորման առաջադրություններ:

3. Ֆոտո մոնտաժ:

I. ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. ՁԵՎԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ներածական զրույց՝ զննական իրերի ցուցադրումով, աշակերտներին ծավալային առարկաներ նկարելու միջոցները պարզելու համար (պատկերման հարթության հատկությունները):

25 SEP 2013

Գիտելիքներ և ունակություններ

1. Հասկացողություն՝ պատկերման հարթության մասին:

2. Կարողանալ յերկրաչափական մարմիններ՝ զուգահեռանիստ, գլան, կոն նկարել՝ զանազան դիրքերով և զանազան դարձումներով, ճիշտ տալով կողերի ուղղությունը, հիմքի և նիստերի կրճատումը:

3. Կարողանալ յերկրաչափական մարմիններ նկարելու ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ոգտագործել կենցաղային և արտադրության վերաբերյալ առարկաներ նկարելու համար:

4. Կարողանալ բնականից և պատկերացմամբ զանազան առարկաներ նկարելիս տալ առարկայի և նրա մասերի համաչափությունը, առարկայի կառուցվածքը (կազմությունը) և մեծության հարաբերակցությունն առարկաների միջև:

Մեթոդական ծանոթություններ

Կերպարվեստի դասընթացի նպատակն է աշակերտներին սովորեցնել նկարել առանձին առարկաներ և առարկաների խումբ, վոր նկարով կարելի լինի հնարավոր չափով ճիշտ դատել ձևի, համաչափության և այդ առարկաների դիրքի մասին:

Ուսուցչի գլխավոր նպատակը պետք է լինի աշակերտներին սովորեցնել ճիշտ (հաշվի առնելով պատկերման հարթության հատկությունները) նկարել առարկաները՝ տալով նրանց ծավալը (յեռաչափությունը):

Նկարների վերարտադրության ցուցադրումն ուսանողներին կոգնի, վոր ըմբռնեն թղթի հարթ մակերեսի վրա խորության տպավորությունը տալու հնարավորությունը: Պատկերման հարթության նույն հատկությունները ցույց տվող մի ուրիշ որինակ՝ ուղիղ վեցանկյունին բաժանված յերեք անկյունագծերով, վորը հասկացվում է յերբեմն վորպես հարթ վեցանկյունի, յերբեմն էլ վորպես թափանցիկ խորանարդ:

Գլանաձև և ուղղանկյան ձև ունեցող առարկաներ գիտելիս և նկարելիս անհրաժեշտ է աշակերտների ուշադրությունը դարձնել շրջանի (գլանի և կոնի հիմքերը) և նիստերի կրճատման ու կողերի ուղղության վրա, վորը կախված է տարածության մեջ առարկայի դիրքի փոփոխությունից:

Նկարի ճիշտ կառուցումը հետապնդելու նպատակով դասատուն ցույց է տալիս, վոր բնականում յեղած ուղղահայաց ուղղությունը նկարում պետք է պատկերվի նույնպես ուղղահայաց:

Զուգահեռանիստի ու գլանի ձևի առարկաներ նկարելուց հետո անհրաժեշտ է նույն առարկաները նկարել այլ առարկաների հետ միասին, մի խումբ առարկաների հետ: Ըստ վորում անհրաժեշտ է աշակերտներին առաջարկել համադրել և համեմատել այդ առարկաների ձևերը, նրանց մեծության փոխհարաբերությունը և դասավորությունը տարածության մեջ:

Նույն առաջադրությունները պետք է կատարել նաև կոնաձև առարկաներ նկարելուց հետո: Այդ նպատակով աշակերտներին առաջադրվում է նկարել մի խումբ զանազան ձևի առարկաներ: Յուրաքանչյուր որյեկտի նկատմամբ աշխատանքը տարվում է հետևյալ սխեմայով:

1. Տեսողական և ըստ հնարավորության (յեթե խոսքը փոքր առարկաների մասին է) շոշափողական ծանոթություն առարկայի հետ:

2. Դիտել ձևի տեսանելի փոփոխումը՝ առարկայի դիրքից կախված:

3. Բնականից նկարելը:

4. Առարկան տարբեր դիրքով նկարելը՝ պատկերացմամբ: Յուրաքանչյուր պարապմունքից հետո անհրաժեշտ է աշակերտներին առաջադրություններ տալ ինքնուրույն մշակման համար (տանը):

Առաջադրությունը կազմվում է դասարանական աշխատանքի որինակով, սակայն տրվում են այլ որյեկտներ (որինակ, դասարանում մի զույգ անիվ և առանցք նկարելուց հետո առաջադրվում է տանը նկարել յերկաթուղային ցիստերն, վագոն կամ, տրակտոր և այլն):

2. ՄԱՐԴՈՒ ՈՒՐՎԱԳԾԵՐ

Գիտելիքներ և ունակություններ

Կարողանալ տալ բնականից և պատկերացմամբ մարդու պատկերի ուրվագծերը, պահպանելով մարդու ձևապատկերի (ֆիգուր) հիմնական համաչափությունները:

Մեթոդական ծանոթություններ

Բնականից ուրվագծելու համար հերթով համապատասխան կեցվածք են ընդունում իրենք՝ աշակերտները: Մի դասում կարելի է 3—4 ուրվագիծ տալ: Ուրվագծի համար մի դասի ընթացքում վերցվում է միևնույն կեցվածքը, բայց զանազան դարձումներով:

Պատկերացմամբ նկարելիս՝ մարդը պատկերում են նույն կեցվածքով, ինչ կեցվածքով հաջող դասերին պետք է նկարեն բնականից:

Ինչ վերաբերում է պատկերացմամբ նկարելու քանակին, ապա կարելի է միևնույն շարժումը մի քանի անգամ նկարել (ուսումնասիրելու նպատակով), կամ մարդ նկարել զանազան շարժումներով:

Տանը մարդ նկարելու համար առաջադրվում է մարդ նկարել վոչ առանձին, այլ վորևե մի թեմատիկ կոմպոզիցիայում: Նը-կարները կատարվում են վոչ կարծր կապարե մատիտով:

II. ԳՈՒՅՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Գիտելիքներ և ունակություններ

1. Կարողանալ բնականից նկարելու ժամանակ ուղղանկյան ձև ունեցող առարկաների նկատելը, կլոր առարկաների լուսավորված ու վոչ լուսավորված տեղերը գույնով առանձնացնել:

2. Կարողանալ բնականից նկարելու ժամանակ տալ հակադիր գույների հարաբերակցությունն առարկաների խմբում:

3. Կարողանալ բնականից նկարելիս գործադրել խառնելու միջոցով ստացված ածանցյալ գույները:

4. Կարողանալ տարբերել տաք և սառը գույները:

5. Գիտենալ գույները և ջրաներկերի անունները:

6. Հակացողություն ունենալ գույներն իրար վրա դնելու միջոցով ածանցյալ գույներ ստանալու մասին:

Մեթոդական ծանոթություններ

Գույնն ուսումնասիրելու վարժություններին հատկացվում է 15—20 րոպե՝ մինչև բնականից ներկերով նկարելը: Վարժություները պետք է համապատասխանեն աշակերտներին առաջադրած խնդիրներին՝ բնականից նկարելու վերաբերյալ:

Առարկաները, խմբում նկարելու համար, պետք է լինեն պարզ և ամբողջական ձևով ու գույնով, առանց նախշերի ու զարդարանքների և իրենց նշանակությամբ պետք է նման լինեն:

Լուսապատկերն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է ունենալ նրա աղյուսակը՝ մեծ չափերով, ամբողջ դասարանին ցուցադրելու համար (նման աղյուսակ կարող է պատրաստել ինքը դասատուն):

Գույնն ուսումնասիրելու ունակություններն ամրապնդելու համար կարելի է լրացուցիչ պարապմունքներ անցկացնել, և աշակերտներն այդ մասամբ կարող են տանը կատարել, որինակ՝ շերտի վրա նախշեր հորինելը (հաշիա) յերկրաչափական ձևերից, վորոնք իրար վրա յեն դրված և ներկված հիմնական ու ածանցյալ գույներով, կամ կարող են տեքստ ունեցող գունավոր հարթություններով պլակատ նկարել:

III. ԿՈՄՊՈԶԻՑԻՈՆ ՆԿԱՐԶՈՒԹՅՈՒՆ

Գիտելիքներ և ունակություններ

1. Կարողանալ կոմպոզիցիոն-թեմատիկ նկարում կիրառել այն գիտելիքներն ու ունակությունները, վոր ձեռք են բերված կերպարավեստի գրագիտության գծով առարկաների գույներն ու ձևերն ուսումնասիրելիս:

2. Կարողանալ գիտել և հիշողությամբ ձևավորել իր գիտողությունները նկարում:

3. Կարողանալ գրական յերկերում դրսևորել ամենացայտուն բնորոշ մոմենտները և ձևավորել նկարում:

4. Կարողանալ պատկերելու համար ընտրել ամենից շատ բնորոշ և նշանակություն ունեցող առարկաները, դեն գցելով վոչ բնորոշն ու ավելորդը:

Մեթոդական ծանոթություններ

Իլյուստրատիվ նկարչության ժամանակ, յենթադրվում է, վոր նախորդ պետք է ծանոթացնել այն գրական յերկին, վորի նկատմամբ իլյուստրացիաներ են պատրաստում:

Ծանոթ պատկերները, գործող անձանց բնավորությունները և գործողության վայրը յերեխաների հիշողության մեջ թարմացնելու համար անհրաժեշտ է, վոր դասատուն աշակերտների հետ անցկացնի համապատասխան զրույց, նույնիսկ կարդա իլյուստրացիաների համար ընտրված գեղարվեստական յերկի համապատասխան կտորները:

Այս աշխատանքների ժամանակ պետք է մեծ ուշադրություն դարձնել, վոր աշակերտները խորհեն, թե ինչպես պետք է դասավորել նկարած ոբյեկտները թղթի վրա:

Դասատուն պետք է մատնանշի պատկերելու համար գլխավորը· ամենից շատ բնորոշն ընտրել կարողանալու անհրաժեշտությունը, առանձնացնել տա այդ գլխավորը նկարում, վոչ միայն նրան նկարում հատուկ տեղ հատկացնելու համար, այլև դույն տալու համար:

Գույների վրա աշխատելիս՝ ցանկալի յե աշակերտների ուշադրությունը դարձնել լանդշաֆտի բնորոշ առանձնահատկությունների և գործողության ժամանակի վրա (որինակ՝ Լոռին և Թումանյանի «Գիքորը»—լեռներ, բույսեր· ժամանակը—յերեկո, ցերեկ և այլն):

IV· ՖՈՏՈ-ՄՈՆՏԱԺ (4 ԺԱՄ), 6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Ֆոտո-մոնտաժը 6-րդ դասարանի աշակերտության համար պլակատներ և պատի լրագրեր ձևավորելու շատ հարմար և մատչելի միջոց է, յերբ հարկավոր են՝ առաջնորդների նկարներ, վորոշ տեղերի բարդ տեսարաններ, մեքենաների տեխնիկական նկարներ և այլն: Մի խոսքով նկարներ, վորոնք մատչելի են 5-րդ դասարանի շարքային աշակերտների հմտությանը:

Այս միջոցը, պլակատներ և պատի լրագրեր ձևավորելու գործում, հեշտացնում է վողջ դասարանի մասնակցությունը:

Իհարկե ձևավորման այս միջոցը չպետք է ի չարը գործ դնել և պետք է շարունակել, վորքան կարելի յե, հաճախակի ոգտվել աշակերտների նկարներից:

Աշակերտների համար պիտի պարզ լինի, վոր ֆոտո-մոնտաժին դիմում են վո՛չ նրա համար, վորպեսզի նկարելուց ազատեն նրանց, այլ վորպեսզի դժվար բոպեին ողնեն և լրացնեն նրանց աշխատանքն այնտեղ, ուր նրանց հմտությունն անբավարար է:

Աշակերտների աշխատանքի մեջ, այնուամենայնիվ, ամենաարժեքավորը նրանց սեփական աշխատանքն է:

Գիտելիքներ և ունակություններ

Աշակերտը պետք է սովորի՝ լավ կտրել և կազմել նկարներ:

Պետք է կարողանա կանոնավոր կերպով կպցնել և կպցրածը աննկատելի դարձնել:

Պետք է նկարները համակցի բնագրի հետ այնպես, վորպեսզի մեկը մյուսին չնսեմացնի:

Մեթոդական ծանոթություններ

Նախքան ֆոտո-մոնտաժի աշխատանքին անցնելը, աշակերտների հետ պետք է մանրամասն զրույց ունենալ, թե ինչպես պետք է սկսել և տանել աշխատանքը (պլանավորել ամբողջ պլակատը—վորտեղ և ինչ պետք է վերարտադրվի—ուրվագիծ կազմել· վորքան մանրամասն և ճշտորեն մտածված լինի, այնքան հեշտ կլինի մոնտաժելը):

Յուրաքանչյուր տալ ֆոտո-մոնտաժի նպատակահարմարությունը· (արագացնում է աշխատանքը, հարկավոր բոպեին հնարավորություն է տալիս հարկավոր և հարմար նկարներ ունենալ):

Վորպեսզի պարզ լինի, թե վոր դեպքերում է ցանկալի ֆոտո-մոնտաժի դիմել, անհրաժեշտ է դասարանում համապատասխան որինակների վրա անցկացնել բացատրական զրույցը:

Վորակյալ համակցության դեպքում կարելի յե շատ դեղեցիկ պլակատ ստանալ:

Նախնական բացատրությունից հետո դասարանում, աշակերտների հետ միասին պետք է մոնտաժել՝ պլակատ, սխեմա, դիագրամա:

Թեմաները պետք է նախորոք բաժանել և հնարավորություն տալ նրանց տանը լավ մտածելու, նախապատրաստել ուրվագիծ, ընտրել հարկավոր նկարներ (շատ նյութ կարելի յե ձեռք բերել հին լրագրներից և ժուրնալներից):

Այս դասի համար պետք է պատրաստի ունենալ անհրաժեշտ նյութեր՝ սպիտակ ու գունավոր թուղթ, ներկեր, սոսինձ, մկրատ, քանոն և այլն, վորպեսզի նյութի պատճառով աշխատանքը կանգ չառնի:

Լավ կլինի, յերբ դասատուն ինքն իր ձեռքով մոնտաժած պլակատը ցույց տա աշակերտներին։ Աշակերտներն, առհասարակ, շատ են սիրում տեսնել իրենց ուսուցչի աշխատանքը։ Ուսուցչի աշխատանքի ցուցադրումն ավելի համոզիչ է տպածից և շատ է բարձրանում ուսուցչի հեղինակությունը։

Յեթե պայմանները թույլ են տալիս, լավ է, վոր դասարանում կոլեկտիվ կերպով մոնտաժեն մի քանի մեծ պլակատներ։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

I. ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. ՁԵՎԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ (9 ԺԱՄ)

1. Զուգահեռանիստ. (լուցկու տուփ)։ Նկար բնականից, դիտողություններ տուփի ձևերի տեսանելի փոփոխությունների՝ տուփի դիրքը փոխելիս։ Կողմերի, կողերի և անկյունների փոփոխվելը։ Հետագա նկարումները պատկերացմամբ՝ լուցկու տուփը տարբեր դիրքերով դրված (1 ժամ)։

2. Խոշոր և մանր առարկաներ, վորոնք զուգահեռանիստի ձև ունեն. տարբեր մեծության ու համաչափության տուփեր, արկղեր, ճամբրուկներ (չեմոդաններ) մեծ դրքեր։ Նկարումներ բնականից, դիտողություններ ձևի տեսանելի փոփոխության նկատմամբ՝ առարկան այս կամ այն կողմ դարձնելիս ու թեքելիս։ Նկարչություն պատկերացմամբ՝ զանազան դիրքերով (2 ժամ)։

3. Պատկերել զուգահեռանիստի ½, ¼ և ⅛ մասը։ Նկարչություն պատկերացմամբ (2 ժամ)։

4. Գլան. Նկարել բնականից։ Դիտողություն գլանի հիմքի (շրջանի) տեսանելի փոփոխության՝ գլանի դիրքը փոփոխելիս։

Նկարել պատկերացմամբ՝ զանազան դիրքերով (1 ժամ)։

5. Գլանին մոտիկ ձև ունեցող խոշոր և մանր առարկաներ (գավաթ, դույլ, թանաքաման, քանկա, փայտի կտոր)։ Նկարել առանձին առարկաներ բնականից և պատկերացմամբ զանազան դիրքերում (2 ժամ)։

6. Բնականից նկարել մի խումբ առարկաներ (գլանաձև առարկա և ուղղանկյան ծավալային ձև ունեցող առարկա)։ Նկարել նույն առարկաների, այլ ձևով դասավորված խումբ (պատկերացմամբ, (1 ժամ)։

2. ՄԱՐԴՈՒ ՈՒՐՎԱԳԾԵՐ (4 ԺԱՄ)

1. Ուրվագիծ բնականից։ Մարդը նստած (նկար պատկերացմամբ), մարդը կանգնած (2 ժամ)։

2. Ուրվագիծ բնականից։ Մարդը կանգնած (նկար պատկերացմամբ) մարդը կռանում է (2 ժամ)։

II. ԳՈՒՅՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

1. ԲՆԱԿԱՆԻՑ ՆԵՐԿԵՐՈՎ ՄԻ ԽՈՒՄԲ ԱՌԱՐԿԱՆԵՐ ՆԿԱՐԵԼԸ (3 ԺԱՄ)

Նկարելու որյեկտների որինակներ. 1. Բանջարեղեններ և պտուղներ (դդում, բադրջան, գազար, տաքտեղ, խնձոր, տանձ, ձմերուկ, սեխ և այլն)։

2. Սպորտի և մանկական կենցաղի առարկաներ (վալեյբոլի գնդակ, թմբուկ, տուփ և այլն)։

3. Ուսումնական պարագաներ—սեղանի լամպ՝ կանաչ լուսամփոփով, դիրք, ներկերի տուփ և այլն։

2. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ (2 ԺԱՄ)

1. Ջրաներկերի տախտակ կազմելը (գույներ և անուններ)։

2. Պալիտրայի վրա գույները խառնելու միջոցով ածանցյալ գույներ ստանալը և 10 սմ.×3 սմ. չափի ուղղանկյուններն ածանցյալ գույներով ներկելը (մեխանիկական խառնուրդ)։

III. ԿՈՄՊՈԶԻՑԻՈՆ ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ (3 ԺԱՄ)

1. ԹԵՄԱՏԻԿ ՆԿԱՐ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅԱՄԲ

Պատկերել մարդիկ՝ կենցաղային վորոշ միջավայրում (սահմանափակ տարածություն)։ Վորպես որինակ կարելի յե վերցնել հետևյալ թեմաները. «մեր բակը», «դպրոցամերձ հողամասը կանաչապատելը»։

2. ՆԿԱՐ ԳՐԱԿԱՆ ՑԵՐԿԵՐԻ ԹԵՄԱՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Վ. Միրաքյան—«Գարունը լեռներում» (հատված «Լալվարի վորոշ»-ից), Հ. Թումանյանի—«Ձարի վերջը»։

ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

I. ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. ՁԵՎԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ (5 ԺԱՄ)

1. Նկարել գլանաձև առարկաների մակերեսին փակցրած յերկրաչափական ձևեր (որինակ. բանկաներ, կամ տուփ պիտակով) (1 ժամ):

2. Մի գույդ անիվներ առանցքով: Մողել բնականից և ապա պատկերացմամբ նկարել զանազան դիրքերով (1 ժամ):

3. Կոն: Նկարել բնականից: Նկարել զանազան դիրքերով պատկերացմամբ (1 ժամ):

4. Կոնաձև խոշոր և մանր առարկաներ նկարելը (ծաղկաման, բարձրախոս, կաթսա, թեյաման և այլն) (1 ժամ):

5. Խոշոր և մանր առարկաներ՝ համակցված ձևով (կոնի և գլանի, յերկու գլանի միացում և այլն. ճաշար, բիտոն, շիշ, սրճաման, կոճ և այլն): Զանազան դիրքերով բնականից և պատկերացմամբ նկարելը (1 ժամ):

2. ՄԱՐԴՈՒ ՈՒՐՎԱԳԾԵՐ (4 ԺԱՄ)

1. Ուրվագիծ բնականից: Մարդը կռանում է, հատակից առարկա յե վերցնում և մարդը՝ վոտքը սանդուխքի վրա դրած (2 ժամ):

2. Նկարել դիտողությամբ և պատկերացմամբ. մարդը դնում է, մարդը վազում է (2 ժամ):

II. ԳՈՒՅՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

1. ԲՆԱԿԱՆԻՑ ՄԻ ԽՈՒՄԲ ԱՌԱՐԿԱՆԵՐ ՆԿԱՐԵԼ ՆԵՐԿԵՐՈՎ (3 ԺԱՄ)

Տնտեսական իրեր.

ա) Պուլիկ կամ դավաթ՝ դունավոր ֆոնի վրա:

բ) Կանաչ գույնի շիշ, ուղղանկյան ձևի բիտոն և ճաշար՝ դունավոր ֆոնի վրա (կարմիր):

գ) Բույսը ծաղկամանում, սպիտակ դավաթ (դունավոր ֆոնի վրա):

Ըստ գույների առարկաների խումբն այնպես է կառուցվում, վոր դյուրացվի գույների հակադիր հարաբերության ըմբռնումն աշակերտների կողմից:

2. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ (2 ԺԱՄ)

1. Ածանցյալ գույներ ստանալը՝ համապատասխան գույներով չրջաններ ներկելով. յերբեմն չրջաններն իրենց մասերով ծածկում են իրար (խառնուրդ գույների՝ մեկը մյուսի վրա դնելու ոգնությամբ):

2. Դիտել արևի լուսապատկերը (սպեկտր) լուսակադիտակով և նկարել աղյուսակի վրա: Ծանոթություն տաք և սառ հակադիր գույների:

III. ԿՈՄՊՈԶԻՑԻՈՆ ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ (3 ԺԱՄ)

1. Թեմատիկ նկար հիշողությամբ և դիտողությամբ. «Պիոներական ճամբար» և խաղեր:

2. ՆԿԱՐ ԳՐԱԿԱՆ ՑԵՐԿԵՐԻ ԹԵՄԱՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ (3 ԺԱՄ)

Վորպես թեմայի որինակ. Զարենց — «Բալլադ գնդապետ Տոմսոնի, կոմյերիա աղի, գործադուլի մասին». Դեմրիճյան— «Քարհատներ». Զորյան—«Ցերկաթուղի». Նորենց—«Սահմանապահը», Հյուզո—«Գավրոշը»:

IV. ՖՈՏՈ-ՄՈՆՏԱԺ (4 ԺԱՄ)

ՀԱԽՀ-ՍՍՀ
ՊԻ. Մ. Մասիսյան
ՄԱՍՆԻԿՑՈՒՆԻ ԱՆՎԱՆ